ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ
14.01.2022Թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 10 անդամները:

Բացակայում են Հ.Գրիգորյանը, Ն.Վարդանյանը, Մ.Պողոսյանը, Տ.Եփրեմյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝
Համայնքի ղեկավարի տեղակալ Հ.Ղազանչյանը, համայնքի ղեկավարի գլխավոր խորհրդական Վ. Չիլինգարյանը, աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժնի պետեր Վ.Բարսամյանը,Բ. Բալբաբյանը,Ա. Ծերունյանը, Ա.Զաքարյանը, Գ.Աֆյանը, Ս.Բալաբեկյանը և գյուղերի վարչական ղեկավարները:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Ձեզ եմ ներկայացնում համայնքի ավագանու թիվ 1 հերթական նիստի օրակարգը՝

1. Չարենցավան համայնքի 2021 թվականի բյուջեի 4-րդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի հաղորդման մասին:
2. Չարենցավան համայնքի սեփականության 2021 թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:
3. Չարենցավան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 93-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
4. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:
5. Համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքների նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:
6. Քաղաքացուն սեփականության իրավունքով պատկանող շինության զբաղեցրած հողատարածքն ուղղակի վաճառքով օտարելու մասին:
7. «Արա Մանուկյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ում հավելավճարներ սահմանելու մասին:

8. «Արա Մանուկյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի դահլիճների ժամանակավոր օգտագործման համար գանձվող վարձակալական վճարի սահմանման մասին:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը օրակարգային հարցի վերաբերյալ:

Կողմ -10 դեմ - 0 ձեռնպահ -0

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

1 *Զարենցավան համայնքի 2021 թվականի բյուջեի 4-րդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի հաղորդման մասին:*

/Զեկ. Գ.Ամֆյան/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի.***առաջարկում եմ.*** ի գիտություն ընդունել Զարենցավան համայնքի 2021 թվականի բյուջեի 4-րդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին համայնքի ղեկավարի հաղորդումները (կցվում է):

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը օրակարգային հարցի վերաբերյալ:

Կողմ -10 դեմ - 0 ձեռնպահ -0

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

2.Չարենցավան համայնքի սեփականության 2021 թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:

/Զեկ. Գ.Աֆյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի և 77-րդ հոդվածի դրույթներով՝ ***առաջարկում եմ*** հաստատել Չարենցավան համայնքի սեփականության 2021 թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-10 դեմ - 0 ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

3.Չարենցավան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 93-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

/Զեկ. Գ.Աֆյան/

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով՝ հաշվի առնելով, որ Չարենցավան համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատվել է 2021 թվականի դեկտեմբերի 20-ին և չի արտացոլվել 2022 թվականի տարեսկզբի պարտքերը և բյուջեի վարչական ու ֆոնդային մասերի ազատ մնացորդները, ***առաջարկում եմ.*** Չարենցավան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 20-ի «Չարենցավան համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 93-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ;

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-10 դեմ - 0 ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

4. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:

/Զեկ. Գ.Աֆյան/

Հաշվի առնելով Զարենցավան համայնքի գ. Արզականի Թեղենիքի խճուղու թիվ 16 տան բնակիչ ***Արթուր Խաչատրյանի*** 2022 թվականի հունվարի 11-ի թիվ 126-16 և Զարենցավան համայնքի գ. Արզականի Նաիրի Զարյան փողոցի 1 տան բնակիչ ***Մկրտիչ Աղեկյանի*** 2022 թվականի հունվարի 13-ի թիվ 160-16 դիմումները ֆինանսական աջակցություն հատկացնելու մասին և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝առաջարկում եմ.Զարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 150.0 հազ. դրամ հատկացնել ***Արթուր Խաչատրյանին,***Զարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 200.0 հազ. դրամ հատկացնել

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-10 **դեմ - 0** **ձեռնպահ -0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

5. Համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքների նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:

/Զեկ.Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման 64-րդ կետի դրույթներով և հինք ընդունելով ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 1/փ-366 և N 1/փ-368 դրական

եզրակացությունները.***առաջարկում եմ.*** Համայնքային սեփականություն հանդիսացող 07-0015-0112-0001 ծածկագրով հողատարածքից 0,03094հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր հողատեսքի նպատակային նշանակությունը համարել փոխված որպես բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամաս:

Համայնքային սեփականություն հանդիսացող 07-0015-0051-0004 ծածկագրով 0,02499 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսքի նպատակային նշանակությունը համարել փոխված որպես բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամաս:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-10 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

6. Քաղաքացուն սեփականության իրավունքով պատկանող շինության զբաղեցրած հողատարածքն ուղղակի վաճառքով օտարելու մասին:

/Զեկ.Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի պահանջներով, նկատի ունենալով, որ 07-007-054-038 կադաստրային ծածկագրով՝ 25 քմ մակերեսով հողատարածքը չի դասվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի հողատեսքերի դասին.***առաջարկում եմ.*** Թույլատրել ուղղակի վաճառքով օտարելու քաղաքացուն սեփականության իրավունքով պատկանող 5-րդ թաղամասի 7-րդ շենքի շրջակայքում գտնվող արհեստանոցի զբաղեցրած 07-007-054-038 կադաստրային ծածկագրով՝ 25 քմ մակերեսով հողատարածքը /կից ներկայացվում է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման սեփականության վկայականի պատճենը/:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-10 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

7.«Արա Մանուկյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ում հավելավճարներ սահմանելու մասին:

/Զեկ. Ս.Մուրադյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ կետով և Աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ կետով.*առաջարկում եմ.*

Զարենցավան համայնքի *«Արա Մանուկյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց»* համայնքային ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական անձնակազմի պաշտոնային դրույքաչափերի նկատմամբ կիրառել հավելավճարներ համաձայն հավելվածի:

հավելված

Հ/հ	*Մանկավարժական անձնակազմ*	*Հավելավճարի չափ*
1.	Բարձրագույն մասնագիտական կրթության համար	10%
2.	Սպորտի վարպետ որակավորման համար	30%
3.	Միջազգային սպորտի վարպետ որակավորման համար	40%

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-10 դեմ-0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

8«Արա Մանուկյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի դահլիճների ժամանակավոր օգտագործման համար գանձվող վարձակալական վճարի սահմանման մասին:

/Զեկ. Ս.Մուրադյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21-րդ ենթակետով՝ ***առաջակում եմ*** Չարենցավան համայնքի ***«Արա Մանուկյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց»*** համայնքային ոչ առևտրային կազմակերպության դահլիճները ժամանակավոր օգտագործման տրամադրման դեպքում սահմանել վարձակալական վճար մեկ օրվա համար՝ ապրիլի 15-ից հոկտեմբեր 14-ը ներառյալ՝ 80.0 հազար դրամ և հոկտեմբերի 15-ից ապրիլի 14-ը ներառյալ՝ 120.0 հազ. դրամ: Երեք և ավել օրերի վարձակալության դեպքում կիրառել զեղչ՝ 50% չափով:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-10 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Բաբայան Նարեկ

Բաբայան Վալերի

Գասպարյան Անատոլի

Գասպարյան Մելիք

Դավթյան Կարեն

Երիցյան Գագիկ

Խլղաթյան Արսեն

Վարդանյան Նորայր

Վարդանյան Սարգիս

Փանոսյան Արթուր

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Նիստն արձանագրեց Ս.Մուրադյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**